

* * *

Ժամանակն հասած էր այլևս դեպքերու վեհագոյնին. հսկումի ժամ մը կ'ապրէինք այլեւս:

Մեր մտքերն սկսած էին սաւառնիլ անդին հորիզոնին ծայրը... Վատիկանեան բարձունքին շուրջը, հոն նշմարելով Հրեշտակ մը ձիւնազգեստ ու չքեղ տեսարանի մը խորհրդաւոր հեռապատկերը...:

Համաշխարհային կոթող և անմրցելի Գլուխ-Գործոց դարձած Սիքստեան Մատրան մէջ, ուր վեհաժողովներու Մեծագոյնը կը գումարուի ամէն անգամ որ ընտրութիւն պիտի ըլլայ Հռովմի Սրբ. Քահանայապետի՝ ճիշտ հոն պիտի կատարուի օր մը վերջ... Հայկական Զայնաշոր:

Գէպք մը հոյակապ, որ իբր աննախընթաց՝ միաժամանակ պիտի գրաւէ ամէնէն ուշագրաւ և թանկագին էջերէն մին Ընդհանուր Եկեղեցւոյ պատմութեան և Հայ Կաթ. Պատրիարքութեան տարեգրութիւններուն:

... Սալ և դարէ դար և սերունդէ սերունդ շնորհապարտ զգացումներով և օրհնութեամբ պիտի յիշատակուի Հայաստանի Անմահներու կարգին՝ Տանն Կիլիկիոյ մեր Պատրիարքութեան Աթոռը փառաւորօղ և Հայ Ծէսը պանծացնող Պիոս ԺԲ և թ Քահանայապետին Օգոստոսիաւ Անունը:

Հ. ՂԵՒՈՆԴ ՏԱՅԵԱՆ



Ամերիկացի սպաներու խումբը Գերպ. Ասրաթոր Սրապիոն վ. Ուլուհոցեանի հետ՝ լուսանկարուած շոգեկառքի մէջ
Gruppo degli ufficiali Americani con S. E. Mons. Abate Serapione Uluhogian, fotografati nel treno

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԽՈՐ ՊԱՏԱՐԱԳ

ՍԻՔՍՏԵԱՆ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

* * *

Եկեղեցւոյ 19 դարերու կեանքին մէջ առաջին ու աննախընթաց դէպք մըն է զոր պիտի արձանագրենք այլևս յաւերժօրէն այսօրուան ու վաղուան պատմագիրները:

Հայ ծէսը, հայ լեզուն, հայկական պատարագը իր պաշտօնեաներու դասակարգով, կաթողիկոսէն մինչեւ խոնարհ դպիրները, հայ տաճարներու պարզ ու ազգային շրջանակէն յանկարծ փոխադրուեցան Վատիկան տարւոյս Մարտի 12-ին, հրաւերովն ու պատուասիրութեամբը Անոր՝ որուն կը խոնարհին որպէս Քրիստոսի Փոխանորդի՝ չորս հարիւր միլիոն հաւատացեալներ ամէն երկրէ, ամէն ցեղէ եւ ամէն լեզուէ:

Հոն ուրեմն, Վատիկանի Սիքստեան մատրան մէջ, ներքեւ այն կամարներու զոր հրաշակերտած է մարդկութեան գերագոյն հանճարը՝ Միքանձելոյ, յանդիման անոր ահեղ ու անմահ «Վերջին դատաստան»ին, երեւցաւ Հայ ծէսի պատարագը իր բոլոր փառաւորութեամբ, իր հարազատ պերճ լեզուով եւ սրտազրաւ երգերով, Հայ եկեղեցւոյ օծուն ու բարեպաշտիկ աղօթքներով, հայ կուսաններու եւ տիկիւններու աչքին լոյսով ու նուրբ մատնեքով՝ ասղնեգործ ոսկի ու արծաթ բանուածներով, հայ ոսկերիչներու դրուագած սերուբէնաւոր զոյգներով, սկիզով եւն: Իսկապէս բացառիկ ցուցահանդէս մը հայ սրբազան արուեստին՝ զոր տեսան զմայլանքով եւ բարեպաշտութեամբ ամէն ազգի ներկայացուցիչներ, ու աննախանձ փառաբանեցին Հայուն հաւատքը, արուեստն ու քաղաքակրթութիւնը:

Պատրաստութիւն. - Այն օրէն երբ Ս. Քահանայապետը Պիոս ԺԲ քրիստոնէական հոգւոյ մեծութեամբ, հայ ազգին հանդէպ ունեցած հայրական սիրով եւ ի մասնաւորի Գերերջանիկ Հոգեւոր Տէր Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան Կաթողիկոսի հոգեկան ու մտաւոր բարձր ձիրքերը գնահատելով՝ զանկա ուղած էր ծիրանաւորական չքեղ պատուով պսակել, առաջինը դասելով զանկա քրիստոնեայ մեծագոյն ազգերու եկեղեցական ընտրելագոյն դէմքերուն, ըստ ինքեան այն օրէն սահմանուած կ'ըլլար հայ ծէսով պատարագի մատուցումը Սիքստեան մատրան մէջ Ն. Ս. Քահանայապետին Թագադրութեան տարեդարձին օրը, քանի որ նորընտիր Ծիրանաւոր դասի առաջինին սահմանուած է այդ պատիւը դարաւոր սովորութեամբ նուիրականացած:

Հանդերձ այնու, հարկ է ըսել թէ եւ ոչ մէկուն մտքէն կ'անցնէր նման բացառութիւն մը: Եւ ինչ որ վեր էր մեր ակնկալութենէն, իրականացաւ Պիոս ԺԲ. Սրբազան Քահանայապետին բոլորովին անձնական հաճութեամբ եւ կարգադրութեամբ:

Ս. Պապի փափաքին գործադրութեան համար իսկոյն զբաղեցաւ Արեւելեան Ս. Ժողովը՝ զլիաւորութեամբ Յրանսացի գիտնական ու հայագէտ ծիրանաւոր Եւզինէոս Թիսօբրանի, համաձայնութեամբ նոյնինքն Հոգեւոր Տէր Աղաճանեան Ծիրանաւոր Պատրիարքի, եւ Հռովմէ մէջ



Նկեղեցական զգեստներու փոխադրութեամբ յամ-
ծնախումբ.
Ա. - զիծ. ծախէմ աջ. ԳՅՈՂԱԿԵՍ ԼՈՍՏՈՅ, ԳԵՐԱՅ.
Արքանայր, Մաթթիոյր Գարաֆալ.
Բ. - զիծ. Զ. Կարապետ Վ. Ամատումի, ԳԵՐԱՅ.
Դիմիզի Ումպերթոյ
Commissione per il trasporto dei paramenti
sacri

մատուռ եւ տեսնել սրբազան հանգէսը
իր բոլոր փառքին մէջ:

Ժամը իննուկէսին արդէն Սիքստեան
մատրան մօտ եւ հեռու վատիկանեան
զահլիճներն ու անցքերը լեցուած էին
ծայրէ ծայր եռուն ու զեռուն անթիւ բազ-
մութեամբ՝ որոնք անձկանօք կը սպասէին
զէթ անցքը տեսնելու Ս. Պապին ու հայ-
կական թափօրին: Մատրան մէջ ըստ
աստիճանի տեղ գրաւած էին Հռոմի իշ-

խանապետներ, պատրիկներ ու աղետա-
կաններ, Ս. Պապին ազգականներն ու
զանազան կարգի ասպետներ, չուրջ երե-
սուն Պետութեանց ղեկանադիտական մար-
միրներն ու ներկայացուցիչներ Անգլիայէն,
Միացեալ Նահանգներէն սկսեալ մինչեւ
փոքրիկ Սան Մարինոյի Հանրապետու-
թիւնը, վերջապէս միջազգային դոյն ու-
նեցող ընտրանին, ու անոնց հետ նաեւ Հայ
ուխտաւորները, կուսանները (Հռոմի) եւ:

Ժամը 9,45ին արդէն Պօղոսեան կոչ-
ուած մատրան (Cappella Paolina) մէջէն
ուր զգեստաւորուած էինք՝ յառաջեց
Հայկական թափօրը առջեւն ունենալով
խաչակիր ու զոյգ մը ջահընկալ հայ դը-
պիրներ, անոնց ետեւէն զոյգ մը քոցա-
կիր սարկաւազ, չորս զոյգ ուրիշ սարկա-
ւազներ, յետոյ զլուխները սաղաւարտ ու
բուրվառակիր խնկարկու երկու աւագ
սարկաւազները Հ. Ղեւոնդ Վ. Տայեան
եւ Հ. Նզիա Վ. Փէշիկեան, ամէնքն ալ
«Ղազէղի» կոչուած զեղահիւս եւ թան-
կազին շապիկներով, ասոնց ետեւէն Հո-
գեւոր Տիրոջ անմիջական առնթերակա-
ները Գերպ. Յովսէփ Վ. Պարիկեան եւ
Գերպ. Գրիգոր Վ. Ինճէեան. իբրեւ
պատուոյ առնթերականեր եպիսկոպոսա-
կան զգեստաւորութեամբ՝ Գերպ. Պետ-
րոս Արքեպս. Քէտիճեան եւ Գերպ. Սրա-
պիոն Վ. Ուլուհոճեան՝ Ընդհ. Աբրայ
Միթիթարեան Ուխտին: Ամէնէն վերջ Հո-
գեւոր Տէր Վսեմափայլ Ծիրանաւոր Պա-
տրիարք Աղաճանեան՝ զգեցած կարմիր
թաւշի վրայ ոսկեթել բանուած ամենա-
շքեղ շուրջառ, զոհարներով եւ ոսկիով
շողջողուն եմիփորոնով, ու գլուխը դրած
ալանակուռ եւ ոսկեթել թաղը:

Ու արեւելեան շքեղութեամբ եւ ճոխու-
թեամբ ալնախտիղ հայ թափօրը կը յա-
ռաջէր «Այսօր աստուածութիւնն զուար-
ճանայ» շարականի դանդաղ ու վսեմ
զնացքով, անցնելով աջ ու ձախ խոնուած
Ժողովրդեան մէջէն՝ որմէ ուրախութիւն

եւ զմայլանք կը ճառագայթէր: Հազիւ
մատրան սեմը կոխեցինք, դպրաց դասը՝
որ արդէն հոն ներսը տեղաւորուած էր
երգատեղւոյն վրայ, իր վերէն ունենալով
պապական երգիչները Փերոգիի ղեկավա-
րութեան տակ, սկսաւ ներսէն «Յորհորդ
խորին», եւ հուսկ «Թագաւոր երկնաւոր».
այդ պահուն Սիքստեան մատուռը լոյսե-
րու մէջ ողողուն՝ արդէն իր դասին մէջ
ունէր հարիւրեակ մը եպիսկոպոսներ, յե-
տոյ Աբրահներ, վանահայրեր, կրօնաւորա-
կան անթիւ հաստատութեանց Գործակալ
ներկայացուցիչներ, Վատիկանի եւ Հռով-
մէական Ս. Ժողովներու բարձրաստիճան
անդամներ, եւ հուսկ կու գային 24 վը-
սեմափառ ծիրանաւորները, որոնցմէ ան-
միջապէս վերջ՝ Ժամը 10ին երեւցաւ Ս.
Քահանայապետը իր բոլոր շքախումբով
Ժողովրդեան ամբաւ ուրախութեան մէջ:

Երբ հայ դպիրները լռեցին, Փերոգիի
ղեկավարութեամբ պապական խումբը եր-
գեց «Tu es Petrus» (Դու ես Վէճ) ըզ-
մայլելի երգը: Ս. Քահանայապետը յա-
ռաջացած եւ արդէն տեղաւորուած էր
իրեն համար պատրաստուած գահին վը-
րայ, երբ ամէնուն յոտնկայս խորին լը-
թեան եւ բարեպաշտ հետաքրքրութեան
մէջ սկսաւ Հայ հայրապետական պատա-
մաղը, որ այնքան բազմութեան եւ մա-
նաւանդ եկեղեցականներու հազիւ մէկ
քանիին ծանօթ էր: Ս. Քահանայապետէն
սկսեալ մինչեւ վերջին կղերիկոսը ու ներ-
կանները մատրան մէջ իրենց ձեռքն ա-
կանները մատրան մէջ իրենց պատարազի
ուշնորդ ունէին հայերէն պատարազի
խտալիւրէն կամ Փրանսերէն թարգմանու-
թիւնը՝ պատրաստուած արարողական բո-
լոր շարժումներու եւ զիտելիքներու ծա-
լոթութիւններով: Սակայն ծէսին անթերի
կատարման համար արարողապետի յատուկ
կարգը կը կատարէր Հ. Կարապետ Վ. Ամա-
ղեր կը կատարէր Հ. Կարապետ Վ. Պապի
հարկաւոր զիտելիք եւ շարժում Ս. Պապի
արարողապետին, որ իր կարգին կը հա-


ղորդէր իր ենթականերուն. եւ այսպէս
Ս. Պապէն սկսեալ մինչեւ յետինը կանո-
նաւոր կերպով կրցան հետեւիլ ամէն շար-
ժումի եւ ծէսի բովանդակ իմաստին:

Մինչ Սարկաւազապետ Հ. Ղեւոնդ Վ.
Տայեան՝ քաղցր եւ ոլորուն կը մեներգէր
«Ընտրեալ» տաղը, եւ Հոգեւոր Տէրը
ծնրադիր եւ լուռ կը մըմնջէր յոտս Ս.
Սեղանին Նարեկացիի հոգեւունջ աղօթքը,
Փերոգիի խումբն ալ սկսաւ «Oremus pro
Pontifice» այսինքն Ս. Քահանայապետին
«Կենաց եւ փրկութեան» համար ծիսական
աղօթերգը, որու միջոցին բոլոր ծիրա-



Փոխադրութեամբ Յամծնախումբի անդամները շո-
գեկաւորի մէջ խօսելով Նկեղեցական զգեստներու
մասին:

I membri della Commissione del trasporto, nel
treno, mentre parlano dei paramenti sacri.



Ծառու շարականի երգեցողության պահում
Durante un corale

նաւորները մի առ մի ծնրադիր Ս. Քա-
հանայապետին յայտնեցին իրենց յարգու-
թիւնն եւ հնազանդութիւնը՝ ինչպէս սո-
վորութիւն է:

Հուսկ կ'արժէ հոս նշանակել թէ, հան-
գիստուր ձայնաւոր պատարագներուն,
երբ ներկայ է Ս. Քահանայապետը, հարկ
է որ նա իր ներգործական մասնակցու-
թիւնը բերէ նոյն ծէսին: Ատոր համար էր
որ Ն. Սրբութիւնը երեք անգամ խոնկ
լեցուց աւագ սարկաւազի բուրվառին
(«Յայտ յարկ նուիրանաց»ին, Աւետարա-
նին եւ վերաբերումին), ու աւարտելուն՝
համբուրեց Աւետարանը: Երկու անգամ
հայերէն լեզուով խաղաղութիւն տուաւ
«Մաղաղութիւն ամենեցուն», այսինքն, ա-
ռաջին եւ վերջին Աւետարանին սկիզբը:

«Ողջոյն տուք միմեանց»ին՝ Աւագ սար-
կաւազը Ս. Սեղան հրաւիրեց Ն. Սրբու-
թեան առնթերակայ ծիրանաւորը Na-
salli Rocca, որ յետ ողջադուրուելու
Պատարագիչ Վսեմ. Հոգեւոր Տիրոջ հետ՝
ողջոյնն առաւ եւ տարաւ Ս. Պապին:
Գերպ. Քէտիճեան ալ՝ Առնթերակայ Ս.
Սեղանին՝ ողջոյնն առաւ եւ տարաւ ծի-
րանաւորներուն եւ եպիսկոպոսներուն՝
անոնց հետ ողջադուրուելով:

Նշանակելի կէտեր մը եւս: «Առէք կե-
րայք»ի եւ «Ի Սրբութիւն Սրբոց»ի ժա-
մանակ՝ Ն. Սրբութիւնը իր դահէն իջած
ծնրադրեց սարկաւազներու կիսաբոլորին
ետեւ՝ յատկապէս պատրաստուած աղո-
թարանին վրայ:

Իսկ «Սուրբ Աստուած»ին Աւետարանն


համբուրելու հրաւիրուեցաւ Հոռմի հին
աղնուական Տունէ իշխան Marcantonio Co-
lonna՝ առնթերակայ Ս. Քահանայապե-
տին:

Յետ Հոգեւոր Տիրոջ «Պահպանիչ»ին
Ս. Պապը տուաւ վերջին օրհնութիւնը, եւ
ապա կրկին կաղմուելով հայկական թա-
փօրը «Հրաշափառ Աստուած» շարականը
երգելով վերադարձաւ Cappella Paolina
ղանդուածին մէջէն ծովացած ժողովր-
դեան, որ զմայլած ու յափշտակուած էր:
Ու մեր ետեւէն ալ զանդաղօրէն դուրս
կ'ելլէր պապական թափօրը, եւ Ս. Քա-
հանայապետը յառաջանալով վերամբար-
ձիկ աթոռով կ'անցնէր օրհնելով ժողո-
վուրդը, որ անօրինակ խանդավառութեան
մէջ կեցցէներ կը դռչէր Ս. Պապին:

Հայկական պատարագը կատարուեցաւ
անթերի եւ յաջող թէ՛ Գերերջանիկ Պա-
տարագիչ Հոգեւոր Տիրոջ յստակ առողա-
նութեան եւ շնորհալի ձայնին համար, թէ՛
սարկաւազներու Եկմարեան ու Մխիթա-
րեան վանքի եղանակներուն ներդաշնակ
խառնումով եւ զանազանութեամբ եւ թէ՛
հուսկ Դպրաց Դասի եռանդուն եւ կանո-
նաւոր երգեցողութեամբ, ինչ որ խոր
տպաւորութիւն եւ զմայլանք ազդեց բո-
լոր ներկաներուն վրայ: Նշանակենք մի-
այն՝ թէ «Քրիստոս ի մէջ մեր յայտնե-
ցաւ»ը Կոմիտասինն էր: Երգերուն, եւ
յատկապէս Եկմարեան պատարագի համար
կը բաւէր մեծ երգահան Փերոզի լիա-
սիրտ դովեանը՝ զոր արտայայտած էր




Սուրբ Սուրբ-ի պահում, բազկատարած աղօթք Վսեմ. Պատարագիչին
Il «Sanctus, Sanctus» e la preghiera solenne del Canone



«Առէք սերայք» ի պահը. Ս. Քահանայապետը ծնրադրած Մատթան մէջտեղ
Momento della Consacrazione. - Il Santo Padre genuflesso in mezzo alla Capella

Միւրի. Ուխտիս Ընդհ. Աթոռակալ երա-
ժըշտագէտ Հ. Ղեւոնդ Վ. Տաշեանի,
Ձայնաւորի յաջորդօրն իսկ: Եւ արդարեւ
մեր հիւսելիք գովեստներէն շատ աւելի
խօսուն են եւ արժէքաւոր օտարներունը,
որոնցմէ մէջ կը բերենք դէթ մէկ երկու
հատը: Այսպէս Ծիրանաւորներէն Վսեմ.
Փիցցարտոյ առիթ ունեցաւ խոստովանե-
լու թէ Հայկ. պատարագի ամբողջ տեւո-
ղութեան յուզումի արցունք թափած էր՝
ազդուելով կրօնապէս այնքան խորիմաստ
աղօթքներէ, երգերէ: Ուրիշ մը, Արքեպ.
Mella di S. Elia կ'ըսէր՝ թէ Ձեմ կրնար
զմայլանքս զսպել այնպիսի բարձր եւ ի-
մաստալից աղօթքներու առջեւ, օծուն
զգացումներուն եւ խոր հաւատքին եւ բա-
րեպաշտութեան: Ուրիշ մը, Ս. Պօղոսի

վանքի Աբրահայր Վաննուշէի Եպս.
առաջին հանդիպումին ըսած էր մեղմէ
մէկուն. «E' stato un vero trionfo!». Կա-
տարեալ յաղթանակ մ'էր: Եւ ասոնք պա-
տահարար: Չերկարելու համար յիշենք
նոյն ինքն Ս. Քահանայապետին դոհունա-
կութեան, շնորհակալութեան եւ խնդակ-
ցութեան խօսքերը առ Վսեմ. Աղաճանեան
Ծիրանաւոր Պատրիարք՝ պատարագէն
վերջ տեղի ունեցած հանդիպումին. ու
Նորին Սրբութիւնը յատկապէս իր զնա-
հատանքն յայտնելով պատարագի երգե-
րուն ըսած էր թէ անոնք ոչ միայն Սի-
քստեան այլ եւ մեծագոյն տաճարներու
մէջ արժանի էին եւ յարմար լսելի ըլլա-
լու:



«Ի սուրբ, ի սուրբ» ի պահը
Solenne benedizione e invito alla Comunione



Որ օրհնես զայնոսիկ-ի պահում
L' ultima preghiera cantata dal Celebrante

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԸ ՎԱՏԻԿԱՆԻ
ՋԱՅՆԱՍՓԻՒՈՒՆՆԵՐ

Այս բացառիկ շնորհը կը պարտինք Ս. Քահանայապետին հայրական հովածութեան, յատկապէս յօգուտ Հայաստանի, յետոյ զազուններուն եւ հուսկ բոլոր քրիստոնէութեան, եւ նոյնիսկ Հոռմի ժողովրդեան, որոնց բազմութիւնը պիտի չկարենար ներկայ ըլլալ անոր:


Հնարաւոր չըլլալով շարունակաբար տալ ամբողջապէս հայկական ճայնաւորը, որ երկու ժամէն աւելի տեւեց, ճայնադրուեցան էական կամ կարեւոր մասերը,

որ յետոյ ժամը 1,15ին-2ի ընթացքին տրուեցան:

Գրեթէ անակնկալօրէն կանչուելով ուստիոկայան՝ նախ պարտք համարեցանք քանի մը խօսք ուղղել հայութեան հետեւեալ բառերով.

«Ուշադրութիւն, ուշադրութիւն:

Վատիկանի քաղաքի ճայնապիւտն է՝ որ կը խօսի: Ողջո՞յն ձեզի, սիրելի հայրենակիցներ մայր հայրենիքի եւ սփիւտքի: Ուշադրութիւն, ուշադրութիւն: Այսօր 12 Մարտ 1946, Պիոս ԺԲ. Ս. Քահանայապետի քաղաքութեան եօթներորդ տարեդարձին՝ հայկական ճայնաւոր պատարագ կը մատուցանէ Գերերջ. Հոգեւոր Տէր Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղանակեալ:



Վերջին ստեղծարար «ի սկզբանէ էր խոսն» ի պահում
Alla lettura dell' ultimo Vangelo « In principio erat Verbum »

Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ, նորընտիր հայագգի Կարդինալը Սիբստան մատրան մէջ, ի ներկայութեան Ս. Քահանայապետին, բոլոր պետութեանց զինանագիտական ներկայացուցիչներուն և անքիւ հայ եւ օտարագգի եկեղեցական ու աշխարհիկ բազմութեան» եւն:

Յետոյ բացատրելով համառօտիւ Հայ երգչախումբի կազմը որ Եկմալեան պատարագը պիտի երգէ, յետոյ սարկաւադներու մասին եւ զգեստներուն, ինչպէս վերեւ արդէն նկարագրեցինք:

Տրուեցան ձայնադրուած հետեւեալ մասերը. Սորհուրդ խորին, Ընտրեալ, Tu es Petrus, Oremus pro Pontifice, Սուրբ Աստուած, Սաղաղութիւն ամենեցուն (Ս. Պապէն արտասանուած), Աւետարանի

Վերջաւորութիւն, Փառք քեզ Տէր, Հաւատամք, Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, Սուրբ սուրբ, Առէք կերայք, Արքէք ի սմանէ, Հողի, Հայր մեր, ի սուրբ ի սուրբ, Օրհնեցից եւ հուսկ Ս. Քահանայապետին օրհնութիւնը:

Մէն մի մաս յաջորդաբար ձայնասրբութիւն առաջ, միջբոֆօնի դիմաց նստած Միթարեան Հայր մը, Ռատիոյի վարիչ եւ տուիչ Յիսուսեան Հայր մը եւ Փրանսացի քահանայ մը, հայ-խոալ-Փրանս լեզուներով քանի մը խօսքով կու տայինք աղօթքին կամ երգին խմատը եւ պատարագի արարողութեան պահը որպէս զի ունկնդիրները կարենային հետեւիլ ծէսին եւ հասկնալ:

Վերջապահն ալ տուինք միայն հայերէն՝



Սուրբ Պատարագին. — Օրհնութիւն Ս. Քահանայապետին և զեկոյց լիակատար ներդրութեան
Fine della Messa. — La Benedizione del Santo Padre annuncio dell' indulgenza plenaria



Յաւարտ պատարագին՝ դարձ Ս. Քահանայապետին
Il Santo Padre mentre lascia la Cappella Sistina alla fine della Messa

հետեւեալ բառերով. «Պատարագը վերջացած է. Ս. Քահանայապետը բոլոր ներկաներուն եւ բովանդակ աշխարհի կու տայ իր օրհնութիւնը եւ ներդրութիւն լիակատար՝ սահմանուած պայմաններով: Թափօրը կը կազմուի. յամբաքայլ կը վերադառնան աւանդատուն «Հրաշափառ» շարականն երգելով ի պատիւ նոյն ինքն Գերերջանիկ Հոգեւոր Տէր Գրիգոր Պետրոս ԺԵ. Կաթողիկոս Պատրիարքի Տանն Կիլիկիոյ, որուն կը մաղթենք յանուն ամ-

բողջ Հայութեան՝ երջանիկ եւ երկար տարիներ՝ ի փառս Աստուծոյ, յօգուտ Ս. Եկեղեցւոյ եւ ի պարծանս Հայ ազգին: Երախտագիտութիւն եւ ամենախորին շնորհակալութիւն յանուն ամբողջ Հայութեան առ Ս. Քահանայապետ Պիոս ԺԲ, որ այսքան զերագոյն միթարութիւն եւ պատիւ շնորհեց Հայ ազգին. թող Աստուած զինքը պահէ երկար եւ երջանիկ տարիներ՝ որպէս Հայր եւ Սաղաղաբար աշխարհի:

Հ. ԵՂԻԱ ՓԵՉԻԿԵԱՆ